ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/14, 30.01.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ, Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ

Հասցե՝ ք.Երևան Տերյան 44

Հեռ. 091 511-755

Էլ. փոստ kentronkanachapatum@mail.ru

Պատվիրատու՝ Երևան համայնք

Հասցե՝ ք.Երևան Արգիշտի 1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան

Երևան քաղաքի կանաչապատ տարածքների

խնամքի և պահպանման աշխատանքների ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2

ծածկագրով բաց մրցույթ

Բողոք

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ Ընթացակարգ) որին 27.12.2018թ 6-րդ չափաբաժնի մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ և ճանաչվել է 1-ին տեղ գրաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ առաջին տեղ գրաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի կողմից տրվել է եզրակացություն համաձայն, որի «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 27.12.20180թ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 915000 /ինն հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ ներկայացված հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

ՀՀ ֆինանսների նախարարություն
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱՍ
ՄՈՒՏՔ N 3363-19
«30» 01 2019 թ.

Բողոքի իրավական հիմքեր և հիմնավորում

ՀՀ Գնումների մասին օրենքի (այսուհետ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1 ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ 27.12.2018թ դրությամբ /հայտ ներկայացնելու օրը/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 915000/ինն հարյուր տասնհինգ հազար/ ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում եմ, որ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ մուտ հայտ ներկայցնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջության պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Սակայն Երևանի քաղաքապետարանի կողմից ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջության պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքին համաձայն վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով, այնինչ նման պարտավորության առկայություն փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ -ի կողմից:

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի համաձայն «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ 27.12.2018թ դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները ըստ, որի Ընկերությունը հայտ ներկայացնելու օրվա դրությամբ 27.12.2018թ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

պարտավորություններ չուներ, ավելին միևնույն ժամանակշրջանում Ընկերությունը ունեցել է մոտ 9 միլիոն ՀՀ դրամ միասնական հաշվում առկա գումար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ նիստի թիվ 5-րդ արձանագրությամբ «Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ հայտը մերժելու մասին որոշումը:

Կից ներկայացվում է

- 27.12.2018թ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի օրինակը,
- 22.01.2019թ ՀՀ ՊԵԿ կողմից տրված տեղեկանքի պատճենը,
- ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ նիստի թիվ 5 արձանագրության պատճենը,
- Բողոքարկման վճարը կատարված լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը,
- Տնօրենի ժ/պ-ի նույնականացման քարտի պատճենը:

Խնդրում եմ բողոքը բավարարվելու դեպքում վճարը փախանցեք «Հայրիզնեսբանկ» ՓԲԸ-ի h/h1150012641300100 հաշվեհամարին:

Առդիր՝ 7 թերթ:

«Կենտրոն-Կանաչապատում» ՓԲԸ-ի

Տնօրենի ժ/պ Ռ.Սիմոնյան

29.01.2019թ